Արևիկ Անափիոսյան

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Բրյուսել, հոկտեմբերի 10-11, 2018թ.

Եվրոպական հանձնաժողով

Գործուղման նպատակ

Արևելյան գործընկերության շրջանակներում ԵՄ-Հայաստան 4-րդ ենթաժողովի նիստը, որպես պատվիրակության ղեկավար,
ԵՄ գործընկերոջ հետ համանախագահելը, նիստի օրակարգում ընդգրկված կրթության թեմաները ներկայացնելը:

Գործուղման ընթացքում հանդիպումներ են կազմակերպվել նաև Եվրոպական արտաքին գործերի ծառայության Ռուսաստանի, Արևելյան գործընկերության, Կենտրոնական Ասիայի, տարածաշրջանային համագործակցության և ԵԱՀԿ-ի հարցերով տնօրեն Լյուկ Դևինի և Եվրոպական հանձնաժողովի Հարևանության հարցերով գլխավոր տնօրինության Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի և Արևելյան գործընկերության հարցերով բաժնի ղեկավար Վասիլիս Մարագոսի հետ:

<u>Քննարկված թեմաներ</u>

Ենթակոմիտեի նիստի ժամական քննարկվել են՝

1. Հայաստանի զբաղվածության և սոցիալական հարցերի քաղաքականության զարգացումները,
2. ԵՄ զբաղվածության սոցիալական պաշտպանության և ներգրավման քաղաքականության զարգացումները,
3. ՀՀ կրթական համակարգի և վերապատրաստման քաղաքականության զարգացումները և բարեփոխումները,
4. ԵՄ կրթական համակարգի քաղաքականության զարգացումները,
5. Erasmus+ ծրագրում ՀՀ մասնակցությունը,
6. Շարունակական կրթության թարմացումը ՄԿՈՒ ոլորտում,
7. ԵՄ ՄԿՈՒ ոլորտի հիմնական զարգացումները,
8. ՀՀ և ԵՄ մշակութային և եիրիտաս., առողջ. քաղաքականության հիմնական զարգացումները,
9. ՀՀ և ԵՄ հետազոտությունների և նորարարության ոլորտների վերջին քաղաքականության զարգացումները,
10. Հայաստանի անդամակցումը «Հորիզոն 2020» ծրագրին:

Լյուկ Դևինինի հետ քննարկվել են ԵՄ Հայաստան համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի առաջընթացը:

Վասիլիս Մարագոսի հետ քննարկվել են կրթության ոլորտում իրականացվող բյուջետային աջակցության ծրագրի փոփոխությունները, EU4Innovation ստորագրվելիք գրանտային ծրագրի մանրամասները, նախագծվող ծրագրերն ու ԵՄ-Հայաստան համագործակցության այլ հնարավորություններ.

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նիստի շրջանակներում քննարկվել են մի շարք ոլորտներ, ինչպիսիք են՝ զբաղվածության և սոցիալական հարցերը, կրթությունը և գիտությունը մշակույթը, երիտասարդությունը, առողջապահությունը: Հայկական կողմից ելույթով հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոց. հարցերի նախարարի տեղակալ Արման Ուդումյանը կարևորելով սոցիալական տեսչական ծառայությունները ՀՀ օրենսդրությունը մոտարկելու տեսանկյունից՝ CEPA ճանապարհային քարտեզի շրջանակներում ԵՄ-ին առաջարկեց՝
Տեսչական բնագավառում հնարավորությունների ընդլայնում վստահ լինելով, որ այն կետերը, որոնք ներառված են օրենսդրության մեջ՝ կիրականացվեն:

Կրթություն

ԿԳՆ նախարարի տեղակալ Արևիկ Անափիոսյանը ներկայացրեց ՀՀ կրթության ոլորտում իրականացվող և նախատեսվող բարեփոխումների ծրագրերը: Ներկայացվեց, որ կան փաստաթղթեր, որոնք դեռևս նախագծային փուլում են, բայց նշվեց նաև, որ Կառավարության ծրագրից բխող գործողությունների պլանը հիմնականում նշում է բարեփոխումների ուղենիշները: Որպես հիմնական ոլորտ բարեփոխումների համար նշվեցին նախադպրոցական կրթությունը, հանրակրթությունը, ՄԿՈՒ ոլորտը և բարձրագույն կրթության բարեփոխումները: Նախադպրոցական կրթության մասով կարևորվեց նախադպրոցական կրթության հասանելիության բարձրացումը, այլընտրանքային. Մոդելներով նախադպրոցական կրթության տրամադրումը և համապատասխանաբար նոր բովանդակության մշակումը: Հանրակրթության բարեփոխման մասով առավել կարևորվեց ծրագրերի և բովանդակության արդիականացումը, ուսուցիչների պատրաստման ր վերապատրաստման համակարգը: ՄԿՈՒ ոլորտում կարևորվեց դուալ համակարգի ներդրումը, և ըստ տարածաշրջանային զարգացման հեռանկարների ուսումնական հաստատությունների և ծրագրերի մշակումն ու լրամշակումը: Բարձրագույն կրթությունում հիմնականում շեշտադրվեց բուհերի կառավարման համարագրի փոփոխությունը, ակադեմիական բարեվարքությունը, գիտության և կրթության կապը, ինչպես նաև

բուհերի միջազգայնացումը, շարժունությունը և միջազգային գործընթացներում պետության մասնակցությունը:

Նիստի ժամանակ Ա. Անափիոսյանը ներկայացրեց ԵՄ կողմից ղեկավարվող ծրագրերը, ինչպես նաև նշեց 2020 թվականին սպասվող արդյունքները

Քննարկվեց նաև Էրազմուս ծրագրի շրջանակներում նախատեսված հետագա քայլերը, ինչպես նաև ԵՄ գործընկերների կողմից նշվեց, որ կհստակեցվեն որոշ կանոններ;
Որպես գործնական եզրահանգումներ կրթության ոլորտում առաջարկվեց ամրագրել հետևյալը՝

1. ՀՀ կառավարության կողմից ներկայացված կրթական բարեփոխումները և առանցքային սկզբունքները համահունչ են ԵՄ արժեքներին,
2. ԿԳՆ կողմից մինչև տարվա վերջ կմշակվի 2030 թվականի արդյունքների նախագիծը,
3. Կարևորվեց ուսուցիչների վերապատրաստման գործընթացի արդիականությունը,
4. Կարևորվեց բարձրագույն կրթության մասին նոր օրենքի ընդունումը,
5. Նախանշվեց, որ քայլեր կձեռնարկվեն կրթության և գիտության միջև կապի խզումը փոքրացնելու ուղղությամբ,
6. Կողմերը շարունակում են համագործակցել կրթություն և աշխատաշուկա կապը մեծացնելու ուղղությամբ:

Մշակույթ

Ներկայացվեց մշակութային նոր եվրոպական օրակարգը, որն ապահովում է քաղաքականության շրջանակը:

Մշակութային համագործակցության ծրագրերը կպահպանվեն զարգացման նոր ոլորտում, որոնք կարող են լինել երաժշտությունը, գրքերը, հրատարակությունները, ճարտարապետությունը և մշակութային ժառանգություն:

Քննարկվեց նաև կինոյի մասին օրենքի կարևորությունը և պայմանավորվածություն ձեռք բերվեց այն մասին, որ օրենքն ընդունվելուն պես ՀՀ մշակույթի նախարարությունը ԵՄ գործընկերներին կներկայացնի համապատասխան նախագիծ գնահատելու նպատակով:

Արևիկ Անափիոսյան
17.10.2018